

## «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան

06 սեպտեմբերի 2016թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Հովակիմյան, Ս. Հարությունյան, Պ. Ֆրենգյան, Ա. Մարկոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան

Օրակարգհայտերի բացման և գնահատման նիստի մասին

## 1. Տեղեկություն «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին.

«ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով մրցույթի հայտերը փաստաթղթային ձևով բացվել են հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրը՝ **2016 թվականի սեպտեմբերի 6-ին, ժամը 11:00-ին**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

## 2. Տեղեկություն «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով մրցույթի գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի վերաբերյալ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /Այսուհետ Կարգ/ 44-րդ կետի առաջին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

Ձ/հ	Աշխատանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Աշխատանքի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (<< դրամ)
1	Վթարային ազդանշանի ձևավորման հանգույցի հատուկ ծրագրային ապահովման մշակում, արդիականացում և պատրաստում	<p><b>1. Աշխատանքների ցանկը</b></p> <p>1.1 Հատուկ ծրագրային ապահովմամբ մշակում կոնտրոլների սալիկի (այսուհետ <b>Կ</b>) համար:</p> <p>1.2 Հատուկ ծրագրային ապահովմամբ մշակում <b>Կ</b> սալիկից տվյալները կարդալու և դիտելու համար:</p> <p>1.3 <b>Կ</b> սալիկի կատարելագործված սխեմայի մշակում, աշխատանքի կատարման ընթացքում "Հայատոմ" ՓԲԸ կողմից առաջարկվող սխեմայի հիման վրա:</p> <p>1.4 <b>Կ</b> սալիկի արտադրություն կատարելագործված սխեմային ներկայացվող պահանջների համաձայն (կետ 5) – <b>9հատ:</b></p> <p>1.5 Սնուցման աղբյուրի (այսուհետ <b>ՍԱ</b>) սալիկի արտադրություն <b>ՍԱ</b>-ին ներկայացվող պահանջների համաձայն (կետ 6) – <b>9հատ:</b></p> <p><b>2. Հիմնական պահանջներ</b></p> <p>➤ Մուտքային նմանակային ազդանշանների ամպլիտուդան մինչև 2վ:</p>	11,000,000.00

- Մուտքային նմանակային ազդանշանների հաճախականային տիրույթը 0,1-30Հց:
- Մուտքային նմանակային ազդանշանների քառակուսիների գումարի հաշվարկում X, Y, Z ուղղություններով:
- Ապահովել հնարավորություն RP1 պոտենցիոմետրի օգնությամբ փոփոխել շեմային լարման չափը և մտցնել կոնտրոլների հիշողության մեջ J1 և J2 փոխանջատիչների օգնությամբ:
- Մուտքային նմանակային ազդանշանների քառակուսիների գումարը համեմատել շեմային լարման հետ և շեմը գերազանցելու դեպքում կոնտրոլների ելքերում ապահովել ազդանշաններ "1" և "0" տեսքով:
- Մուտքային նմանակային ազդանշանների քառակուսիների գումարի համեմատումը շեմային լարման հետ սկսել կոնտրոլների սնուցումը միացնելու պահից 30վրկ անց:
- Ապահովել լուսային ազդանշան շեմը գերազանցելու մասին VD1 լուսադիոդի միջոցով:
- Ապահովել "1" և "0" ազդանշանների առկայությունը կոնտրոլների ելքերում 4վրկ ընթացքում շեմը գերազանցող մուտքային ազդանշանի անհետանալուց հետո:
- Ապահովել մուտքային ազդանշանների գրանցում սկսած այն պահից, երբ մուտքային ազդանշանի մեծությունը կհասնի սահմանված շեմի 50% - ին:
- Կոնտրոլների հիշողությանից դուրս հանել գրանցվածը թվային և գրաֆիկական տեսքով:
- Ապահովել կոնտրոլների աշխատանքային (գործող) վիճակը ցուցադրող 1Հց հաճախությամբ թարթող լուսային ազդանշան VD2 լուսադիոդի միջոցով:

### **3. Պահանջներ 4 սալիկի հիշողությունից տվյալները կարդալու և ցուցադրելու ծրագրային ապահովմանը**

- 4 սալիկի հետ տվյալների փոխանակման արձանագրության ապահովում RS485 հաջորդական ինտերֆեյսի միջոցով:
- Ապահովել տվյալների փաթեթի ընթերցում և ցուցադրում գրաֆիկական տեսքով:
- Տվյալների պահպանման հնարավորություն առանձին ֆայլով:
- Նախապես պահպանված տվյալների ֆայլերի կրկնական ցուցադրման հնարավորություն:
- Ցուցադրում 3 առանձին գրաֆիկների տեսքով X, Y, Z ուղղություններով:
- Գրաֆիկների առանձին հատվածների խոշորացված ցուցադրում:
- Մարկերների տեղադրում ազդանշանների առանձին հատվածների մակարդակների և ժամանակային արժեքների հաշվարկման համար:

### **4. Լրացուցիչ պահանջներ պատվիրատուին հանձնող լրակազմին**

- Օպերատորի ձեռնարկ:
- Ադմինիստրատորի ձեռնարկ:
- Սպասարկող անձնակազմի գործնական նախապատրաստում:

### **5. 4 սալիկին ներկայացվող պահանջներ սխեմայի կատարելագործումից հետո**

- Ապահովել "1" և "0" ազդանշանների առկայությունը կոնտրոլների

		<p>Ելքերում 4վրկ ընթացքում, շեմը գերազանցող մուտքային ազդանշանի անհետանալուց հետո:</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Ապահովել մուտքային ազդանշանների գրանցում սկսած այն պահից, երբ մուտքային ազդանշանի մեծությունը կհասնի սահմանված շեմի 50% - ին:</li> <li>➤ Կոնտրոլների հիշողությանից դուրս հանել գրանցվածը թվային և գրաֆիկական տեսքով:</li> <li>➤ Ապահովել կոնտրոլների աշխատանքային (գործող) վիճակը ցուցադրող 1Հց հաճականությամբ թարթող լուսային ազդանշան VD2 լուսադիոդի միջոցով:</li> <li>➤ Ապահովել լուսային ազդանշան շեմը գերազանցելու մասին VD1 լուսադիոդի միջոցով:</li> <li>➤ RS485 հաջորդական ինտերֆեյսի առկայություն տվյալները համակարգիչ փոխանցելու համար:</li> <li>➤ PIC16 կամ ավելի ժամանակակից կոնտրոլների առկայություն:</li> <li>➤ Էներգաանկախ հիշողության մանրասխեմաների առկայություն:</li> <li>➤ Ելքային օպտրոնային ռելեններ "նորմալ փակ" և "նորմալ բաց" կոնտակտներով:</li> <li>➤ Կ տպասալիկի չափսերը՝ 9×12սմ:</li> <li>➤ Ելքային հարակցիչ (խրոց):</li> </ul> <p><b>6. Պահանջներ սնուցման աղբյուրին (այսուհետ՝ ՍԱ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Մուտքային լարումը՝ ~ 220 – 240Վ:</li> <li>➤ Ելքային հաստատուն լարումները՝ +12,0Վ, 0,2Ա-1 հատ; +5,0Վ, 0,2Ա – 3հատ:</li> <li>➤ Հատուկ պատվիրված տրանսֆորմատոր, որի առաջնային և երկրորդային փաթույթների արանքում տեղադրված է պղնձյա թիթեղից պատրաստված էկրան:</li> <li>➤ Դիոդային կամրջակներ (ուղղիչներ) և հաստատուն լարման կայունացուցիչներ այնպիսի արտադրողներից, ինչպիսիք են՝ Texas Instruments, Linear Technology, National Semiconductor, ST Microelectronics, Vishay և այլն:</li> <li>➤ Ֆիլտրող (զտող) ֆիրմային էլեմենտներ:</li> <li>➤ Ելքային հարակցիչ (խրոց):</li> </ul> <p>ՍԱ տպասալիկի չափսերը՝ 9×12սմ:</p>	
--	--	--	--

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

### 3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Հ/հ	Մասնակցների անվանումները	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը
1	«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ	ՀՀ, 0010, ք. Երևան, Մովսես Խորենացի 17-24	099 58 20 07

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

### 4. Տեղեկություն հայտեր պարունակող ծրարներ կազմման և ներկայացման համապատասխանության մասին.

«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**5. Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջների համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**6. Տեղեկություն մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին (ՀՀ դրամ)**

Զ/հ	Մասնակցների անվանումները	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված Ընդհանուր գինը
1	«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ	9,529,160.00	952,915.00	-	10,482,075.00

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**Հանձնաժողովը որոշեց.**

1. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ-ին, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակցի:
2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**7. Տեղեկություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:


Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

**8. Տեղեկություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.**

«ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ **2016 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 16:00-ին, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայաստան» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝



Հ. Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝




Տ. Հովակիմյան



Ս. Հարությունյան



Պ. Ֆրենգյան



Ա. Մարկոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Տ. Մարգարյան